



Հարկային նորություններ

Հոկտեմբեր-դեկտեմբեր 2017 թ.
Եղի՛ր տեղեկացված

Armenian Tax update

October-December 2017
Be in the know

«Արդյունաբերական կազմակերպությունների կողմից ձեռք բերված՝ ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) մասով վճարված ակցիզային հարկի գումարների փոխհատուցման և ժամկետների մասին» ՀՀ ԿՈ N 1208-Ն

Ընդունվել է 28.09.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Հաստատվել է արդյունաբերական կազմակերպությունների կողմից ձեռքբերված ԱՏԳ ԱԱ 2710 19 710 - 2710 19 980 ապրանքախմբի ծածկագրերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 820 ապրանքախմբի ծածկագրին դասվող շարժիչային յուղերի) ապրանքների մասով վճարված ակցիզային հարկի գումարների փոխհատուցման կարգը: Մասնավորապես, ակցիզային հարկի գումարների փոխհատուցման համար ապրանքներ ձեռք բերող կազմակերպությունը թղթային կրիչով, փոստային կապի միջոցով պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմ է ներկայացնում դիմում ապրանքները ձեռք բերելուց կամ ներմուծելուց հետո վեց ամսվա ընթացքում: ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը դիմումը մուտքագրվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացնում եզրակացություն: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, հարկային մարմնի տեղեկատվական բազայում այդ տեղեկատվության առկայության դեպքում ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացնում եզրակացություն:

Government Decision on "On the Deadlines and Timelines of Excise Tax Refund for Commodities Classified under the FEACN (Foreign Economic Activity Commodity Nomenclature) 2710 19 710 to 2710 19 (except for Engine Oils Classified under FEACN 2710 19 820 Commodity Group) N 1208-N

Adopted 28.09.2017
Enforced 01.01.2018

The procedure for refunding the excise tax for goods classified under FEACN 2710 19 710 - 2710 19 980 commodity group (except for engine oils classified under FEACN 2710 19 820 commodity group), which were purchased by industrial organizations. In particular, to get the excise tax refunds, the organization purchasing the goods shall, via paper form, ordered letter via post service, or electronically present an application to the Personnel of the RA Ministry of Economic Development and Investments within six months after the purchase or importation of the goods. The RA MED shall file a conclusion to the RA State Revenue Committee within 3 working days time following the entry date of the application to the Ministry. The RA State Revenue Committee shall within 5 working days review the documents submitted, and in case this information is available in the data base of tax body, shall submit a conclusion to the RA Ministry of Finance.

«Որոշ ապրանքատեսակների՝ ավելացված արժեքի հարկով հարկման բազայի և շահութահարկով հարկման նպատակով դրանց մատակարարումից ստացվող եկամտի որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, այդ տվյալների ճշգրտման առավելագույն սահմանները և ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ N 1232-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.
Ուժի մեջ է 01.01.2018թ.

Հաստատվել է որոշ ապրանքատեսակների (երկաթային, պղնձային, ցինկային, քրոմային, կապարային մոլիբդենային հանքաքարերի, խտանյութների, երկաթի համաձուլվածքների և այլն), **ավելացված արժեքի հարկի և շահութահարկի** հարկման նպատակով դրանց մատակարարումից ստացվող եկամտի որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, այդ տվյալների ճշգրտման առավելագույն սահմանները և ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը: Սահմանվել է նշված ապրանքատեսակների հաշվարկային գնի որոշման նպատակով հիմք ընդունվող

աղբյուրը (օտարերկրյա բորսա, հանդես, կայք կամ այլ աղբյուր), հաշվարկային գնի որոշման պարբերականությունը, ավելացված արժեքի հարկով հարկման բազան և շահութահարկով հարկման նպատակով դրանց մատակարարումից ստացվող եկամուտը որոշելու նպատակով ճշգրտվող տվյալները (ապրանքի վերջնական քանակ, որակական հատկանիշներ), ապրանքի դիմաց հատուցման ենթակա գումարը, վերջնահաշվարկի արդյունքներով որոշված քանակից մատակարարման պահին որոշված քանակի շեղման առավելագույն սահմանները և ճշգրտման առավելագույն սահմանները խախտելու դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայի և եկամտի հաշվարկման կարգը:

RA Government Decree "On the Data to be Clarified for Determining Income from the Supply of Certain Goods with the Purpose of Charging Profit Tax and Value Added Tax Base; the Maximum Thresholds for Adjusting These Data and the Procedure of Determining Commodity Unit Price".

N 1232-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The following was determined: for the purpose of determining calculation price for the mentioned types of goods (foreign exchange, magazine, website or other source) – the basic source, the frequency of determining the calculation price; for the purposes of charging profit tax and determining the VAT tax base - the data (final quantity, qualitative feature of goods) to be adjusted for the purpose of determining the income received from the supply of these goods; the amount to be reimbursed against the commodity; the maximum thresholds of deviation of the determined quantity at the moment of supply due to the final calculation; the procedure for calculating VAT tax base and income calculation in the cases of violating maximum adjustment limits.

«Անհուսալի համարվող հարկային պարտավորությունները հաշվառելու և հաշվառումից հանելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1269-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է անհուսալի համարվող հարկային պարտավորությունները հաշվառելու և հաշվառումից հանելու կարգը: Սահմանվել է չկատարված հարկային պարտավորությունների անհուսալի համարվելու դեպքերը, մասնավորապես, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի՝ մեկ միլիոն դրամը չգերազանցող հարկային պարտավորությունների բռնագանձման կատարողական վարույթները պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը պարզելու անհնարինության, պարտապանի՝ գույք կամ եկամուտներ չունենալու, կամ պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար բավարար գույք չունենալու հիմքով ավարտվելու դեպքում, եթե բացակայում են կազմակերպությանը, անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին սնանկ ճանաչելու հիմքերը՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից կատարողական վարույթն ավարտելու մասին ընդունված որոշումն ստացվելուց հետո և այլն: Հարկային պարտավորությունները համարվում են անհուսալի հարկային մարմնի ղեկավարի հրամանով և հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմնում վարվող անձնական հաշվի քարտում կատարվում է գրառում անհուսալի համարվող հարկային պարտավորությունների հաշվառման վերաբերյալ:

RA Government Decree "On Determining the Procedure for Accounting and Write-off of Bad Tax Liabilities"

N 1269-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The procedure for accounting and write-off of bad tax liabilities was determined. It has been established that unsatisfactory tax obligations are incurable, in particular, the enforcement proceedings against the taxpayer or the individual entrepreneur or the notary, which exceeds one million drams, are insufficient to clarify the debtor's or its property's location, or to have sufficient property to satisfy the claims of the claimant in case of absence on the ground of absence, if the organization, individual entrepreneur or notary is found to be bankrupt bases after the decision of the Judicial Acts Compulsory Enforcement Service to complete the enforcement proceedings and so on. Tax liabilities are considered by the order of the head of the unreliable tax authority and on the personal account card of the taxpayer's tax office, a record is made on the recording of tax liabilities considered as a dismissal.

«Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացող պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1271-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Կարգավորվել են մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հաշվարկներով առաջացող պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվել է 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ գերավճարի, գերավճարից տարբերվող գումարների հաշվառման կարգը, մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունների, այդ թվում՝ տույժերի, հաշվառման կարգը: Մասնավորապես.

- 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա գերավճարը և գերավճարից տարբերվող գումարը հաշվառվում են մինչև 2018թ. հունվարի 1-ը գործող կարգով՝ գանձապետարանի կողմից վարվող ՀՀ պետական բյուջեի միջոցների առանձին ենթահաշիվներում,
- 2018 թվականի հունվարի 1-ից տույժերը հաշվարկվում են օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո գործող կարգով (առկա գերավճարները հաշվի չեն առնվում),
- մինչև 2018 թվականի հունվարի 1-ը սկսված և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս չավարտված տույժերի հաշվարկումը 2018 թվականի հունվարի 1-ից շարունակվում է 0.075 տոկոսով՝ մինչև հաշվարկման 365-րդ օրը լրանալը,
- մինչև 2018թ. հունվարի 1-ը վերջին հաշվետու ժամանակաշրջանների (2017 թվականի, 2017 թվականի 4-րդ եռամսյակի կամ 2017 թվականի դեկտեմբեր ամսվա) համար 2018 թվականի հունվարի 1-ից հետո հարկ վճարողի ներկայացրած հարկային հաշվարկներով (այդ թվում՝ ճշտված) առաջացող հարկի (վճարի) գումարները, ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի դեբետային գումարները, շահութահարկի, եկամտային հարկի և ռոյալթիների կանխավճարները հաշվառվում (անձնական հաշվի քարտերում գրանցվում) են 2018 թվականի հունվարի 1-ից հետո գործող կարգով:

RA Government Decree "On Establishment of a Procedure for Accounting the Liabilities for Tax Returns (including the Adjusted Returns) submitted for the Reporting Periods before January 1 2018, and the Debits".

N 1271-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

It regulates the relationships associated with the settlement of liabilities and debit amounts arising from calculations related to the reporting periods before January 1, 2018. In particular, the procedure for the calculation of overpayments, amounts other than overpayments as of January 1, 2018; the procedure for accounting tax liabilities, including penalties, for accounting periods before January 1, 2018, was established.

In particular,

- The overpayment and overdue amount as of January 1, 2018 will be accounted as per the procedure in force before January 1, 2018 - in the separate sub-accounts of RA state budget funds run by the Treasury;
- From 1 January 2018 the penalties will be calculated according to the procedure effective after the enforcement of the Tax Code (existing overpayments are not considered);
- Calculation of penalties incurred before January 1, 2018 and not completed by January 1, 2018, starting from January 1, 2018 will continue by 0.075% before the end of the 365th day of calculation;
- Tax amounts (payments) incurred by tax returns submitted by the taxpayers after January 1, 2018 for the last reporting periods before January 1, 2018 (for 2017, 4th quarter of 2017 or December of 2017), the debits of VAT and excise tax, advance payments of profit tax, income tax and royalties shall be accounted (registered in personal account ledgers/cards) under the procedure enforced from January 1, 2018.

«Հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի որակական, պատահական, տեխնոլոգիական և այլ կորուստների փաստաթղթավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1261-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Ներկայացվել են որակական, պատահական, տեխնոլոգիական և այլ կորուստների սահմանումները: Սահմանվել է շահութահարկի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի որակական, պատահական, տեխնոլոգիական և այլ կորուստների արձանագրման կարգը, հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պարտադիր պահանջները:

RA Government Decree “On Determining the Procedure for Documenting Qualitative, Accidental, Technological and Other Losses of Property Deductible from Gross Income for the Purpose of Determining Tax Base”.

N 1261-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The definitions of qualitative, casual, technological and other losses have been presented. The procedure for registering qualitative, casual, technological and other losses of property deducted from gross income for the purpose of determining the taxable income tax base, the mandatory requirements to the supporting documents.

«Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման կարգը, ինչպես առհաշիվ տրված կանխիկ դրամով գումարների նկատմամբ ժամկետային սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1260-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է կանխիկ դրամը կազմակերպության դրամարկղ մուտքագրելու և դրամարկղից ելքագրելու փաստաթղթավորման կարգը, դրամարկղային գործառնությունների ժամկետային սահմանափակումները: Կարգը տարածվում է ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների, այդ թվում՝ պետական և այլ հիմնարկների, կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), օտարերկրյա կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ինչպես նաև ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի վրա: Սահմանվել է թղթային կրիչով և էլեկտրոնային եղանակով դրամարկղային գրքի վարման կարգը:

RA Government Decree "On Procedure for Conducting Cash Desk Operations, Documenting Them, Registering and Running a Cash Register, as well as Setting Deadlines for Cash Advances".

N 1260-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The procedure for documenting cash input and withdrawal from the cash desk, time restrictions of cash desk operations. This Regulation applies to organizations operating in the territory of the Republic of Armenia, including those of state and other institutions, separate offices (branches, representations) of organizations operating in the territory of the Republic of Armenia, separate offices (branches, representations) of foreign organizations operating in the territory of the Republic of Armenia, as well as applies to VAT payer sole entrepreneurs. The procedure for running paper and electronic cash register book was established.

«Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, անվավեր ճանաչման և չեղարկման կարգը և ոչ էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման դեպքերը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1257-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է ինտերնետային կապի միջոցով համակարգչային եղանակով հաշվարկային փաստաթղթերի, հարկային մարմնից ստացված հաշվարկային փաստաթղթերի սերիա-համարներով հաշվարկային փաստաթղթերի, հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դուրսգրվող հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման կարգը: Կանոնակարգվել է հաշվարկային փաստաթղթերի անվավեր ճանաչման և չեղարկման կարգը:

RA Government Decree "On Procedure of Issuing, Invalidating and Cancelling of Invoices and Cases of Issuing Invoices Non-Electronically".

N 1257-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The procedure for issuing electronic invoices, invoices issued by tax authority with serial numbers, invoices issued through cash registers was established. The procedure for invalidation and cancellation of invoices was regulated.

«ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի N 986 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿՈ

N 1287-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 04.11.2017թ.

Փոփոխություններ են կատարվել «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ: Մասնավորապես, սահմանվել է բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը:

**RA Government Decree "On Introducing Amendments to the RA Government Decision N986, dated October 17, 2001"
N 1287-N**

Adopted 05.10.2017
Enforced 04.11.2017

Changes have been made in the RA Government Decree "On Measures Ensuring the Enforcement of the Law of the Republic of Armenia on Nature Protection and Nature Utilization Payments". In particular, the procedure for electronic filing of environmental and nature utilization payments reports was established.

**«Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ
N 1291-Ն**

Ընդունվել է 05.10.2017թ.
Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը: Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգի դրույթները տարածվում են 2017 թվականի չորրորդ եռամսյակի վրա:

**RA Government Decree "On Establishing a Procedure for Submitting Joint Tax Report for Environmental Tax and Nature Utilization Fee"
N 1291-N**

Adopted 05.10.2017
Enforced 01.01.2018

The procedure for submitting joint tax return for environmental tax and nature utilization fees was defined. The provisions for submitting environmental and nature utilization fee reports electronically shall apply to the fourth quarter of 2017.

**«Հսկիչ-դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ-դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգն ու հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու մասին» ՀՀ ԿՈ
N 1318-Ն**

Ընդունվել է 05.10.2017թ.
Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ-դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգն ու հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները: Այն հարկ վճարողները, ովքեր մինչև այս որոշումն ուժի մեջ մտնելը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնի վրա տպագրել են ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, ծառայության անվանումը և կոդը, գնվող ապրանքի քանակը,

դրա չափման միավորը, դրանք տպագրում են նաև այս որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ անկախ 2017 թվականի իրացումից հասույթի մեծությունից:

RA Government Decree "On Technical Requirements for Cash Registers and Network Communication Means, the Procedure for Registering and Deregistering the Cash Registers with Tax Authority, and Approval of Rules for Use of Cash Registers"

N 1318-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The technical requirements for cash registers and network communication means, the procedure for registration and de-registration of cash registers with the tax authority and the rules for the use of cash registers are set out. The taxpayers who have, before the enforcement of this Decision, printed the commodity name, code, description and code of service, the quantity of the goods being purchased, the unit of its measurement on the cash register receipts, in the manner and timeframes established by the RA legislation, shall hereinafter, irrespective of the amount of revenue received from 2017 sales, continue this practice.

«Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1317-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է դպրոցական գրերի և նոտայի տետրերի, սկարչական այբումների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարման, հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարման՝ ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակը:

RA Government Decree "On Determining the Scope of Application of VAT Exemptions"

N 1317-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The VAT exemptions scope for the activities related to the disposal of school text books, notes books, painting albums, children's and school literature, school education publications, scientific and educational editions published by higher educational institutions, specialized scientific organizations, scientific and educational publications published by the National Academy of Sciences of the Republic of Armenia.

«Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ ՀՀ ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում այդ շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարները պետական բյուջեից փոխհատուցելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1371-Ն

Ընդունվել է 28.09.2017թ.

Ուժի մեջ է 16.11.2017թ.

Սահմանվել է շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ ՀՀ ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում այդ շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարները պետական բյուջեից փոխհատուցելու կարգը, փոխհատուցման ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Շահաբաժին ստացած անձանց փոխհատուցվում են ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ներդրված ամբողջ գումարը, բայց ոչ ավելի, քան տվյալ անձի կողմից շահաբաժնի տեսքով ստացվող եկամուտներից շահաբաժին վճարելու հարկային տարվա ընթացքում ՀՀ ռեզիդենտ նույն կազմակերպության կողմից վճարված եկամտային հարկի գումարները:

RA Government Decree "On Establishing the Procedure for Reimbursement of Income Tax from the RA State Budget Charged for the Dividends Invested in the Charter of Equity Capital of the Same RA Resident Organization Paying Dividends During the Tax Year in which They are Received"**N 1371-N**

Adopted 28.09.2017

Enforced 16.11.2017

The procedure for reimbursement of income tax from the RA State Budget charged for the Dividends invested in the charter or equity capital of the same RA resident organization paying dividends during the tax year in which they are received was established. The list of documents required for reimbursement was also determined. Those who have received the dividends shall be compensated for the whole amount invested in the charter or equity capital of the RA resident organization, but not more than the amount of the income tax paid by the same RA resident organization during the tax year, paying dividends from the dividend received by that person.

Շահութահարկ վճարողների (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N 2052-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ԿՈ N 1373-Ն

Ընդունվել է 05.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է շահութահարկ վճարողների շահութահարկի հաշվառման առումով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը:

RA Government Decree "On Approval of Procedure for Formation of a Reserve (Reserve Fund) for Potential Losses of Receivables (except for Banks, Credit Organizations, Insurance Companies and Specialised Entities of Securities Market) for Profit Taxpayers, as well as for Recognising Receivables and Payables as Bad

Debts and for the Write-off Thereof, and Revoking the RA Government Decision N 2052-N dated December 19, 2002”

N 1373-N

Adopted 05.10.2017

Enforced 01.01.2018

The procedure for the formation of reserves (reserve fund) for possible losses of profit taxpayers' receivables (in respect of registering profit tax payers' income tax, the recognition and removal of accounts receivable and payable debts were established.

«Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ալցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

ՀՕ-192-Ն

Ընդունվել է 25.10.2017թ.

Ուժի մեջ է 23.11.2017թ.

Օրենքում կատարված փոփոխության համաձայն, մասնավորապես, սահմանվել է, որ ԱԱՀ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 84 և 85 ապրանքային ենթախմբերին դասվող ապրանքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 8418 10 200 1, 8418 10 800 1, 8418 30 200 1, 8418 40 200 1, 8422 11 000 0, 8447 90 000 1, 8450 11, 8451 21, 8452 10, 8508 11 000 0, 8508 19 000 1, 8509 4, 8516 31 000, 8516 33 000 0, 8516 40, 8516 50, 8516 60 101 0, 8516 71, 8516 72, 8519 20, 8521 90 000 1, 8528 72 ծածկագրերին դասվող ապրանքների) ներմուծումը, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ 2505100000, 250900, 2518200000, 2807, 2817000000, 2836, 3901, 3902, 3903, 3904, 3905, 3906, 3921903000, 4002, 4003, 4004, 4005, 4007, 7201, 7202, 7203, 7204, 7205, 7206, 7207, 7402, 7403, 7404, 7405, 7406, 7407, 7408, 7409, 7410, 7411, 7412, 7413, 7415, 7419991000, 7501, 7502, 7503, 7504, 7505, 7506, 7507, 7508, 7603, 7604, 7605, 7801, 7802, 7804, 7901, 7902, 7903, 7904, 7905, 7907, 8001, 8002, 8003, 8101, 8103, 8104, 8105, 8106, 8107, 8108, 8109, 8110, 8111, 8112, 8113, 8704 10 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից: Արտադրական նշանակության մեքենաների, սարքավորումների, հումքի ԱԱՀ վճարողների կողմից ներմուծումը ԱԱՀ-ից ազատելու դրույթները կիրառվում են 2018 թվականի հունվարի 1-ից կատարվող ներմուծումների նկատմամբ:

Նշված օրենսդրական փոփոխության համաձայն հարկ վճարողներն ազատվում են 2014 թվականի ընթացքում ՀՀ կառավարության հավանության արժանացած ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված՝ ԱՏԳ ԱԱ 9406 00 310 0 ծածկագրին դասվող ապրանքների համար 2014 թվականին հետաձգված և չվճարված (մասնակի վճարված) ԱԱՀ-ի գումարների, ինչպես նաև այդ գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի վճարման պարտավորությունից:

RA Law “On Introducing Amendments to the RA Law “Establishing the List of Non-Excisable Goods Imported without VAT by Legal and Natural Entities

AL-192-N

Adopted 25.10.2017

Enforced 23.11.2017

As per the amendment of the Law, the importation of the goods by VAT payers classified under the FEACN commodity subheadings 84 and 85 (except for goods classified under 8418 10 200 1, 8418 10 800 1, 8418 30 200 1, 8418 40 200 1, 8422 11 000 0, 8447 90 000 1, 8450 11, 8451 21, 8452 10, 8508 11 000 0, 8508 19 000 1, 8509 4, 8516 31 000, 8516 33

000 0, 8516 40, 8516 50, 8516 60 101 0, 8516 71, 8516 72, 8519 20, 8521 90 000 1, 8528 72), as well as the importation of goods classified under the FEACN commodity heading 2505100000, 250900, 2518200000, 2807, 2817000000, 2836, 3901, 3902, 3903, 3904, 3905, 3906, 3921903000, 4002, 4003, 4004, 4005, 4007, 7201, 7202, 7203, 7204, 7205, 7206, 7207, 7402, 7403, 7404, 7405, 7406, 7407, 7408, 7409, 7410, 7411, 7412, 7413, 7415, 7419991000, 7501, 7502, 7503, 7504, 7505, 7506, 7507, 7508, 7603, 7604, 7605, 7801, 7802, 7804, 7901, 7902, 7903, 7904, 7905, 7907, 8001, 8002, 8003, 8101, 8103, 8104, 8105, 8106, 8107, 8108, 8109, 8110, 8111, 8112, 8113, 8704 10 shall be VAT exempt. The VAT exemption for importation of machinery, equipment and raw materials for production purposes shall be in force for importations made after January 1, 2018.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենք

ՀՕ-181-Ն

Ընդունվել է 25.10.2017թ.

Ուժի մեջ է 23.11.2017թ.

Օրենքում կատարված փոփոխության համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների՝ հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների գերազանցող մասը կարող է հաշվանցվել ԱԱՀ վճարողի այլ հարկային պարտավորությունների հաշվին և (կամ) պետական բյուջե հաշվեգրվող հարկային պարտավորությունների բացակայության պայմաններում վերադարձվել: Յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ առկա բյուջեից հաշվանցման ենթակա գումարների այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձը կատարվում են ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա:

Օրենքի գործողությունը տարածվում է 2017 թվականի հուլիսի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկներով առաջացող՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի վրա:

RA Law "On Introducing Amendment to the RA Law "On Value Added Tax""

AL-181-N

Adopted 25.10.2017

Enforced 23.11.2017

As per the change of the Law, when the VAT amounts calculated for taxable turnover exceed the VAT to be offset in the reporting period, the exceeding amount can be offset to the VAT payer's other tax liabilities account, and/or if no such tax liabilities exist, to be refunded. The offset or refund of amounts against other tax liabilities from the existing budget as of 21st of the month following each quarter shall be done on the basis of written application issues by the VAT payer.

The Law shall apply to the VAT amounts to be offset from the budget, which were incurred by VAT returns submitted to the tax authority for reporting periods after January 1, 2017.

«Ռոյալթի վճարողների կողմից խտանյութի իրացման շրջանառության առավելագույն սահմանաչափերը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ

N 1492-Ն

Ընդունվել է 23.11.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է ռոյալթիների հաշվարկման նպատակով, ռոյալթի վճարողների կողմից իրացվող խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս վճարվող մետաղների գծով գնորդի կողմից չվճարվող առավելագույն սահմանաչափերը:

RA Government Decree "On Establishing the Maximum Limits of Concentrate Sale Turnover by Royalty Payers"

N 1492-N

Adopted 23.11.2017

Enforced 01.01.2018

Maximum limits of payments by buyers of paid metals when determining concentrate sale turnover by royalty payers for the purpose of calculating royalties.

«Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

ՀՕ-217-Ն

Ընդունվել է 17.11.2017թ.

Ուժի մեջ է 23.12.2017թ.

Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, մասնավորապես, սահմանվել է, որ միջազգային կազմակերպության վարձու աշխատողների համար **գրանցման հայտերը և անձնավորված հաշվարկները** ներկայացնում է **ՀՀ կառավարության լիազորած մարմինը**՝ գործատուի համար սահմանված կարգով: Այդ նպատակով հարկային մարմինը վերջինիս տրամադրում է համապատասխան հաշվառման համար:

RA Law "On Introducing Amendments and Addenda to the RA Law "On Personified Record Keeping of Income Tax and Social Contributions"

AL-217-N

Adopted 17.11.2017

Enforced 23.12.2017

As per the changes made to the Law, the **registration applications and personified records** of hired employees of international organizations shall be submitted by the authorized body of the **RA Government** in accordance with procedure defined for employer. To this end, the tax authority shall provide the latter a tax registration number.

«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք

ՀՕ 191-Ն

Ընդունվել է 25.10.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

ՀՀ հարկային օրենսգրքում կատարվել են փոփոխություններ, մասնավորապես.

- Ուժը կորցրել են հարկային օրենսգրքի այն դրույթները, որոնք վերաբերում էին ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից բոլոր տեսակի մեքենաների, սարքավորումների (բացառությամբ կենցաղային նշանակություն ունեցող) և հումքային ապրանքների ներմուծման մասով ԱԱՀ-ի վճարման ժամկետը 1-3 տարի ժամկետով հետաձգմանը: Այդ ապրանքատեսակների ներմուծման մասով սահմանվել է ավելացված արժեքի հարկից ազատման արտոնություն:
- Ապրանքների ներմուծման մասով ԱԱՀ-ի վճարման ժամկետը 3 տարի ժամկետով հետաձգելու կարգավորումները 2018թ. հունվարի 1-ից կիրառվում են միայն ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման մասով:

RA Law "On Introducing Amendments and Addenda to the RA Tax Code"

AL 191-N

Adopted 25.10.2017

Enforced 01.01.2018

Changes have been made in the RA Tax Code, in particular:

- The provisions of the Tax Code have been voided, which relate to the 1-3 years VAT deferral for all types of machinery, equipment (except for household goods) and import of raw materials. VAT privilege was granted for the import of these products.
- Starting from January 1, 2018, the 3-year VAT deferral regulation will apply only to the goods imported within the framework of investment projects by organizations sole entrepreneurs selected under the Decision of the Government of the Republic of Armenia.

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենք

ՀՕ-221-Ն

Ընդունվել է 06.12.2017թ.

Ուժի մեջ է 16.12.2017թ.

Օրենքով վավերացվել է 2017 թվականի ապրիլի 11-ին Մոսկվայում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը:

RA Law "On Ratifying the Agreement on "Customs Code of the Eurasian Economic Union""

AL-221-N

Adopted 06.12.2017

Enforced 16.12.2017

Under the Law, the Agreement on the Customs Code of the Eurasian Economic Union signed in Moscow on April 11, 2017 was ratified.

«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

ՀՕ-264-Ն

Ընդունվել է 13.12.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն՝ հարկ վճարողի դիմումից հետո միասնական հաշվին առկա գումարի վերադարձը 20-օրյա ժամկետում չվճարելու դեպքում տույժերի հաշվարկման ժամկետի սկիզբը կրճատվել է 3 անգամ՝ 90 օրը դարձնելով 30 օր:

RA Law "On Introducing Amendment to the RA Tax Code"

AL-264-N

Adopted 13.12.2017

Enforced 01.01.2018

As per the changes made in the Code, the time for calculating penalties in case of failure to refund the amount within 20 days' time on the single account after the submission of an application by the taxpayer, has been reduced 3 times – reduced from 90 days to 30 days.

**«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
ՀՕ-263-Ն**

Ընդունվել է 13.12.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է, որ.

- 2017 թվականի հաշվետու ժամանակաշրջանի համար՝ հարկ վճարողները 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերվող (կառուցվող, մշակվող) ոչ ընթացիկ ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների) ամորտիզացիոն մասհանումները կարող են կատարել գծային մեթոդով,
- հարկ վճարողները գործող օրենսդրությամբ սահմանված հիմնական միջոցների հիմնական խմբերի մեջ հնարավորություն ունեն ձևավորել ենթախմբեր և ըստ ենթախմբերի առանձին հաշվարկել ամորտիզացիոն մասհանումներ:
- Օրենքը կիրառվում է միայն 2017 թվականի հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկի հաշվարկման նպատակով:

**RA Law "On Introducing Amendments and Addenda to the RA Law on Profit Tax"
AL-263-N**

Adopted 13.12.2017

Enforced 01.01.2018

It was determined, that:

- For the 2017 reporting period, the taxpayers shall pay amortization installments of non current assets (including fixed assets and non current assets) purchased (constructed, developed) after January 1, 2014;
- The taxpayers have the right to develop subgroups within the main groups of fixed assets determined by the existing legislation, and calculate the amortization installments by separate subgroups;
- The law shall be applied only for the purpose of calculating profit tax for 2017 reporting period.

**«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»
ՀՕ-277-Ն**

Ընդունվել է 27.12.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է, որ հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով վարելու ժամանակացույցի կիրառման իմաստով 2018 թվականի համար հիմք է ընդունվում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան հաշվարկված՝ 2017 թվականի համախառն եկամտի չափը:

**RA Law "On Introducing Amendment to the RA Law "On Accounting"
AL-277-N**

Adopted 27.12.2017

Enforced 01.01.2018

It is established that for the purpose of applying scheduling through computerized accounting software, as per the legislative requirements regulating the area of accounting,

the 2017 gross income amount calculated in accordance with the Law of the Republic of Armenia "On Profit Tax" will be taken as the basis for 2018.

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

ՀՕ-266-Ն

Ընդունվել է 21.12.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների և լրացումների համաձայն մասնավորապես, սահմանվել են.

1. Շահաբաժինների հարկման մասով՝

• հարկվում է միայն ընդհանուր ժողովի կողմից հայտարարված (փաստացի բաշխված) շահաբաժինները,

• օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում հարկվում են 2017 թվականին և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններում ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինները,

• ՀՀ քաղաքացիների դեպքում հարկվում են 2018 թվականին և դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններում ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում, մասնակցի ստացած շահաբաժինները:

Կազմակերպությունները նվազագույն շահութահարկը նվազեցնում են 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկի կանխավճարների գումարները գերազանցող փաստացի շահութահարկի գումարներից:

2. Եկամտային հարկի հաշվին հիփոթեկային վարկի տոկոսների փոխհատուցման մասով սահմանվել է որոշակի սահմանափակումներ:

3. Վերականգնվել է ներգնա զբոսաշրջության ոլորտի՝ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը:

4. Դիզելային վառելիքի օտարումը 2018թ. հունվարի 1-ից ԱԱՀ-ով հարկվող գործարք համարվելու հետ կապված, սահմանվել է, որ մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներմուծված և 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկ վճարողների մոտ առկա դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների մասով ներմուծման ժամանակ վճարված ակցիզային հարկից ենթակա է հաշվանցման յուրաքանչյուր տոննայի հաշվով 22000 դրամ՝ 2018 թվականի առաջին հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված ակցիզային հարկի և ԱԱՀ-ի միասնական հաշվարկում՝ որպես մատակարարին վճարած ակցիզային հարկ:

5. Բազմակի օգտագործման տարաների հարկման մասով է սահմանվել է, որ տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ: Միաժամանակ սահմանվել է, որ ԱԱՀ-ից ազատվում է շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից ՀՀ կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը:

6. Ծախսերի փաստաթղթավորման մասով, մասնավորապես, հնարավորություն է ընձեռվել 2018թ. հուլիսի 1-ից ձեռքբերումները հիմնավորել նաև հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններով, եթե վերջինիս վրա ՀԴՄ էլեկտրոնային համակարգով տպագրված կլիևի գնորդի կամ ծառայություն ստացողի հարկ վճարողի հաշվառման համարը:

7. Ապրանքների տեղափոխության փաստաթղթավորման մասով՝

- հարկ վճարողներին հնարավորություն է ընձեռվել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ներմուծվող ապրանքների տեղափոխությունն իրականացնել հարկային մարմնի կողմից անվճար տրամադրվող՝ ապրանքների հետագծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքերով: Այս դեպքում հարկ վճարողներն այլևս ստիպված չեն լինի ուղեկցող փաստաթղթեր կազմել, քանի որ նշված էլեկտրոնային սարքերի ուղեկցությամբ տեղափոխվող ապրանքները չեն համարվի առանց ուղեկցող փաստաթղթերի տեղափոխվող ապրանքներ:

8. Անմաքս առևտրի խանութներ ապրանքների ներմուծումը (այդ թվում՝ ԵՏՄ անդամ համարվող կամ չհամարվող երկրներից) ազատվում է ավելացված արժեքի հարկից և ակցիզային հարկից: Անմաքս առևտրի խանութներ ներմուծվող ապրանքները ենթակա չեն դրոշմավորման՝ հաշվի առնելով այն, որ այդ ապրանքներն արդեն իսկ հաշվառվում են եւ գտնվում են հսկողության ներքո:

9. Մինչև հանքի շահագործման սկիզբը կատարված մակաբացման աշխատանքների գծով ճանաչված ակտիվներն ամորտիզացվում են հաստատված օգտակար հանածոյի ընդհանուր պաշարի արդյունահանմանը համամասնորեն՝ ներառվելով արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքում: Հանքի շահագործումն սկսելուց հետո կատարված մակաբացման աշխատանքների գծով ծախսերը վերագրվում են մակաբացման աշխատանքների արդյունքում արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին: Մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

10. ՀՀ տարածքից դուրս սկսվող և ավարտվող տրանսպորտային ծառայությունների՝ ԱԱՀ-ով հարկման մասով սահմանվել է, որ ՀՀ տարածքից դուրս սկսվող և ՀՀ տարածքից դուրս ավարտվող տրանսպորտային ծառայությունները՝ անկախ այն հանգամանքից, որ ծառայություն մատուցողը գրանցված է ՀՀ-ում, համարվում են ԱԱՀ-ով չհարկվող գործարք:

RA Law "On Introducing Amendments and Addenda to the Tax Code of the Republic of Armenia"

AL-266-N

Adopted 21.12.2017

Enforced 01.01.2018

As per the amendments to the Tax Code, the following has been established:

1. Taxation of dividends

- Only the dividends declared (actually allocated) by the general meeting shall be taxed;
- In the case of foreign citizens and persons without citizenship, the dividends received from the profit (as allocation of proceeds) attributed (obtained due to activities of these periods) to 2017 and its following reporting periods;
 - In the case of RA citizens, the dividends received from the profits (as allocation of proceeds) attributed to 2018 and its following reporting periods (profits obtained due to activities of these periods);

Organizations deduct the minimum profit tax from actual profit tax exceeding the amount of advance profit tax for the given reporting period of resident profit taxpayer which relates to the reporting periods after 1 January 2018.

2. Certain restrictions were set out on reimbursement of mortgage interest from the income tax.

3. The VAT exemption privilege of inward tourism has been restored.

4. In regard to the fact, that from 2018 January 1, diesel fuel disposal is regarded as VAT-able transaction, it has been established that the amount to be offset from the excise tax paid on diesel fuel imported as of January 1 inclusive, 2018 shall make 22,000 drams per tonnage, in the joint excise tax and VAT return presented for the first reporting period of 2018 and as the excise tax paid to the supplier.

5. In the case of taxation of multiple use containers, it has been established that in case of delivery of the commodity in a container, the price of the container is included in the VAT tax base. At the same time, it has been established that the disposal of multi-use container that meets the criteria set by the RA Government for circulating multi-use containers shall be exempt from VAT.

6. In regard to cost documentation, from July 1, 2018, the acquisitions will also be allowed to substantiate by receipts of cash registers, provided the taxpayer identification number of the buyer or service recipient is printed on the receipt issued via cash register e-system.

7. In regard to the documentation of goods transportation:

- Taxpayers have the opportunity to transport the goods imported from the Member States of the Eurasian Economic Union by means of electronic product tracing devices provided free of charge by the tax authority. In this case, the taxpayers will no longer have to prepare the accompanying documents as the goods transported with the accompanying electronic devices will no longer be considered as goods transported without accompanying documents.

8. Import of goods in duty free shops (including those from the EEU Member States or non-member states) shall be exempt from value added tax and excise tax. Goods imported into duty free shops are not subject to stamping, given the fact that these products are already registered and placed under control.

9. Prior to the commencement of mine exploitation the assets recognized for the mine stripping activities are amortized proportionally to the total extraction of the approved minerals, and are included in the cost of extracted minerals. The costs of the stripping operations carried out after mine exploitation are attributed to the cost of minerals extracted as a result of the stripping works. The procedure for attributing the costs related to mine stripping activities to the cost of extracted minerals shall be defined by the Government of the Republic of Armenia.

10. In regard to the VAT taxation of transport services starting and ending in the territory of Armenia, it has been established that transport services that start outside Armenia and terminate outside the RA, regardless of the fact that the service provider is registered in the Republic of Armenia, is not a VAT-able transaction.

«Արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև օրենքով սահմանված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներն

իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու վերջնաժամկետն իրենց մոտ առկա՝ դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդների դրոշմավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿՈ 1587-Ն

Ընդունվել է 23.11.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Որոշմամբ հաստատվել է արտադրող կամ ներմուծող չհանդիսացող՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ օտարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև օրենքով սահմանված՝ դրոշմավորման ենթակա ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու վերջնաժամկետն իրենց մոտ առկա՝ դրոշմավորման ենթակա ապրանքների գույքագրված մնացորդների դրոշմավորման կարգը: Մասնավորապես սահմանվել է, որ.

- դրոշմավորման պարտավորություն կրողները չդրոշմավորված ապրանքների մնացորդների դրոշմավորման նպատակով մինչև այդ ապրանքներն իրենց կողմից առանց դրոշմավորման օտարելու համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը գույքագրում են իրենց մոտ առկա չդրոշմավորված ապրանքները և դրանց վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում են հարկային մարմին,
- դրոշմավորման պարտավորություն կրողները հարկային մարմին ներկայացրած՝ չդրոշմավորված ապրանքների քանակին (մնացորդին) համապատասխան դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման վայրի հարկային մարմնից՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված «տեղական» մակագրությամբ դրոշմապիտակների ձեռքբերման հայտի հիման վրա:

RA Government Decree "On Establishing the Procedure for Stamping the Inventories Balance of Goods Subject to Stamping by the Deadline of Sale of Goods Without Stamping, As Per the Statutory Timelines, by Organizations and Sole Entrepreneurs, not Considered as Producer or Importer"

N 1587-N

Adopted 23.11.2017

Enforced 01.01.2018

The Decision establishes the procedure for stamping the inventoried balance of the goods subject to stamping by the deadline of sale of goods without stamping (as per the statutory timeline) by the organizations and sole entrepreneurs who are not the producer or importer.

In particular:

- For the purpose of stamping the unstamped balance of goods, those bearing the liability of stamping, prior to the expiry of the deadline set forth in the RA Tax Code for sale of the unstamped goods they possess, shall inventorize these goods and provide information on them to the tax authority;
- Holders of stamping liability shall obtain the stamps in relevant quantity from the tax office of their registration place on the basis of an electronic application submitted for the acquisition of stamps marked "local".

«Ավելացված արժեքի հարկից ազատվող թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ ԿՈ 1564-Ն

N 1564-Ն

Ընդունվել է 07.12.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Սահմանվել է թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ցանկը, որոնց օտարումն ազատվում է ավելացված արժեքի հարկից:

RA Government Decree "On Establishing the List of Precious and Semi-Precious Stones Exempt from the Value Added Tax".

N 1564-N

Adopted 07.12.2017

Enforced 01.01.2018

The list of precious and semi-precious stones to be exempt from VAT was established.

«Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման

N 326-Ն

Ընդունվել է 25.09.2017թ.

Ուժի մեջ է 01.01.2018թ.

Հաստատվել է ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը:

Decree of the Chairman of the RA SRC Chair "On Approving the Form of Report on Income Paid to Non Resident Profit Taxpayers, the Amounts of Profit Tax Calculated, Withdrawn and Paid to the State Budget from These Income, as well as the Procedure on Completing That Form".

N 326-N

Adopted 25.09.2017

Enforced 01.01.2018

The form of report on the income paid to non resident profit taxpayers, the amounts of profit tax calculated, withdrawn and paid to the state budget from these income, as well as the procedure for completing that form was established.

Տեղեկագրում ներկայացված ինֆորմացիայի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում խնդրում ենք կապվել մեր հայաստանյան Դելոյթ ընկերության մասնագետների հետ.

If you have any questions regarding the information provided in this newsletter, please contact one of the professionals at our Deloitte office in Armenia:

Սուրեն Ղալումյան
Suren Ghalumyan

Պարսամ Գյուլազյան
Parsam Gyulazyan

Հարկային մենեջեր
Manager, Tax & Legal

Ավագ խորհրդատու
Senior Consultant, Tax & Legal

sghalumyan@deloitte.am

Հեռ.՝ +374 (10) 52 65 20 (ներք. 6050)

Phone: +374 (10) 52 65 20 (ext. 6050)

pgyulazyan@deloitte.am

Հեռ.՝ +374 (10) 52 65 20 (ներք. 6021)

Phone: +374 (10) 52 65 20 (ext. 6021)



deloitte.am

Deloitte refers to one or more of Deloitte Touche Tohmatsu Limited, a UK private company limited by guarantee (“DTTL”), its network of member firms, and their related entities. DTTL and each of its member firms are legally separate and independent entities. DTTL (also referred to as “Deloitte Global”) does not provide services to clients. Please see www.deloitte.com/about for a more detailed description of DTTL and its member firms.

Deloitte provides audit, consulting, financial advisory, risk management, tax and related services to public and private clients spanning multiple industries. Deloitte serves four out of five Fortune Global 500® companies through a globally connected network of member firms in more than 150 countries bringing world-class capabilities, insights, and high-quality service to address clients’ most complex business challenges. To learn more about how Deloitte’s approximately 244,000 professionals make an impact that matters, please connect with us on [Facebook](#), [LinkedIn](#), or [Twitter](#).

This communication contains general information only, and none of Deloitte Touche Tohmatsu Limited, its member firms, or their related entities (collectively, the “Deloitte Network”) is, by means of this communication, rendering professional advice or services. Before making any decision or taking any action that may affect your finances or your business, you should consult a qualified professional adviser. No entity in the Deloitte Network shall be responsible for any loss whatsoever sustained by any person who relies on this communication.

© 2018 Deloitte & Touche LLC. All rights reserved.